ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
23.04.2021թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/05» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 04 » հունիսի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Չունգուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 23.04.2021թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/05» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի Հավելված N 1-ի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ աղյուսակի ծառայության մատուցման «Ժամկետը» սյունակում նշված «2021թ-ի դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «2021 թվականի նախավերջին աշխատանքային օրը» բառերով:

1.2 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի Հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Ծ. Իսակովի 48/2
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1930065750990100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01505177
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ս. Չունգուրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 04 » հունիսի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 23 » ապրիլի 2021թ. կնքված
N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/05» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79821170/2	Տպագրական և առաքման ծառայություններ	533 598	914 740	914 740	914 740	1 524 567	1 524 567	1 524 567	**1 524 567**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ծ. Իսակովի 48/2
Հ/Հ՝ 1930065750990100
ՀՎՀՀ՝ 01505177
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Զունգուրյան

(ստորագրություն)

Կ.Տ.